

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում է Հայաստանի Հանրապետությունում փոխադրամիջոցների գույքահարկ վճարողների շրջանակը, փոխադրամիջոցների գույքահարկով հարկվող օբյեկտն ու հարկման բազան, փոխադրամիջոցների գույքահարկի դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը, սույն օրենքի խախտման համար պատասխանատվությունը:

Հոդված 2. Փոխադրամիջոցի գույքահարկի հասկացությունը

Փոխադրամիջոցների գույքահարկը (այսուհետ՝ գույքահարկ) հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող՝ սույն օրենքի 4-րդ հոդվածում նշված հարկվող օբյեկտների համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համայնքի բյուջե վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Անկախ սույն հոդվածի առաջին պարբերությունում նշված սեփականության իրավունքի առկայությունից՝ սույն օրենքով սահմանված դեպքերում ու կարգով գույքահարկ վճարվում է նաև պետական սեփականություն հանդիսացող հարկվող օբյեկտների համար:

Հոդված 3. Փոխադրամիջոցների գույքահարկ վճարողները

1. Գույքահարկ վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, միջազգային կազմակերպություններն ու դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս

ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև դրանց մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները (այսուհետ՝ կազմակերպություններ), Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ ֆիզիկական անձինք), Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս պետական մարմինների, պետական հիմնարկների և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության համայնքները՝ ի դեմս համայնքային հիմնարկների, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում սեփականության իրավունքով պատկանում է սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցը:

2. Անհատ ձեռնարկատերերի վրա տարածվում է ֆիզիկական անձանց համար գույքահարկի վճարման՝ սույն օրենքով սահմանված կարգը:

ԳԼՈՒԽ II

ՀԱՐԿՎՈՂ ՕԲՅԵԿՏԸ, ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՆ, ՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

Հոդված 4. Գույքահարկով հարկվող օբյեկտը

Սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում փոխադրամիջոցները, այդ թվում՝

- 1) ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը.
- 2) ջրային տրանսպորտային միջոցը (շարժիչով աշխատող).
- 3) մոտոցիկլետը.
- 4) ձյունագնացը.
- 5) մոտոամենագնացը (քվադրոցիկլը):

Հոդված 5. Գույքահարկով հարկման բազան

Գույքահարկով հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ): Փոխադրամիջոցի վրա մեկից

ավելի քաշող շարժիչների առկայության դեպքում գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

Հոդված 6. Գույքահարկի դրույքաչափերը

1. Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույքաչափերով՝

1) մինչև 10 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝

ա. 1-ից 120 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 200 դրամ,

բ. 121-ից 250 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 300 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի համար լրացուցիչ՝ 1000 դրամ,

գ. 251 և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 500 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի համար լրացուցիչ՝ 1000 դրամ.

2) 10 և ավելի նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների և բեռնատար (բեռնատուղևորատար) ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝

ա. 1-ից 200 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 100 դրամ,

բ. 201-և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 200 դրամ:

2. Մոտոցիկլետների համար գույքահարկի տարեկան գումարը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի դիմաց 40 դրամ դրույքաչափով:

3. Ջրային փոխադրամիջոցների, ձյունագնացների և մոտոամենագնացների (քվադրոցիկլերի) համար գույքահարկի տարեկան գումարը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի դիմաց 150 դրամ դրույքաչափով:

4. Մինչև երեք տարվա վաղեմության փոխադրամիջոցների համար գույքահարկը հաշվարկվում է 100 տոկոսով:

5. Երեք տարուց ավելի վաղեմության փոխադրամիջոցների համար գույքահարկի գումարը երրորդ տարվան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար պակասեցվում է հարկի գումարի 10 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան հարկի գումարի 50 տոկոսը: Ընդ որում, վաղեմության ժամկետը որոշելու համար հինք է ընդունվում փոխադրամիջոցի թողարկման տարեթիվը:

6. Բեռնատար (բեռնաուղևորատար) ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների վաղեմության ժամկետի 20-րդ տարին լրանալուց հետո տվյալ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի համար գույքահարկ չի հաշվարկվում և չի վճարվում:

7. Սույն հոդվածում նշված փոխադրամիջոցների հարկման բազան կիրվատերով արտահայտված լինելու դեպքում գույքահարկի տարեկան գումարը որոշվում է համապատասխան դրույքաչափի նկատմամբ կիրառելով 1.36 գործակից:

8. Գույքահարկի՝ սույն հոդվածի 1-3-րդ մասով սահմանված դրույքաչափերը յուրաքանչյուր տարվա համար համայնքի ավագանու որոշմամբ կարող են ավելացվել, բայց ոչ ավել, քան այդ դրույքաչափերի կրկնապատիկը:

Սույն մասին համապատասխան՝ գույքահարկի ավելացված դրույքաչափերը կարող են կիրառվել 2015 թվականի հունվարի 1-ից:

ԳԼՈՒԽ III

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 7. Գույքահարկի վճարման պարտավորության առաջանալու և դադարելու կարգը

1. Գույքահարկի վճարման պարտավորությունն առաջանում է գույքահարկով հարկվող օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Գույքահարկի գծով պարտավորությունը դադարում է գույքահարկով հարկվող օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

2. Անկախ սույն հոդվածի 1-ին մասի դրույթներից՝

1) հարկվող օբյեկտի սեփականատեր համարվող ֆիզիկական անձի մահվան դեպքում նոր սեփականատիրոջն են անցնում ֆիզիկական անձի մահվան օրվանից մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սեփականության (ժառանգության) ձևակերպման ամիսը ներառյալ տվյալ հարկվող օբյեկտի համար գույքահարկի գծով հարկային պարտավորությունները:

Սույն կետով նախատեսված դեպքերում գույքահարկի վճարման պարտավորությունն առաջանում է սեփականության (ժառանգության) ձևակերպման ամսվան հաջորդող ամսվա 1-ից,

2) եթե հարկվող օբյեկտի նկատմամբ ֆիզիկական անձի սեփականության իրավունքը ծագում է փոխադրամիջոցի գույքահարկի վճարման համար սույն օրենքով սահմանված ժամկետին անմիջապես նախորդող ամսվա ընթացքում, ապա տվյալ հարկվող օբյեկտի գծով այդ տարվա հարկային պարտավորությունն ավելանում է հաջորդ տարվա հարկային պարտավորությանը և ենթակա է վճարման մինչև հաջորդ տարվա գույքահարկի վճարման ժամկետը,

3) եթե հարկվող օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը պետական գրանցում է ստանում դատավճռի, վճռի կամ իրավական ակտի հիման վրա, նոր սեփականատիրոջն են անցնում դատավճռի, վճռի կամ իրավական ակտի ընդունման ամսվան հաջորդող ամսվա 1-ից մինչև սեփականության պետական գրանցման ամիսը ներառյալ տվյալ հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի գույքահարկի գծով հաշվարկված պարտավորությունները:

Սույն կետով նախատեսված դեպքերում գույքահարկի վճարման պարտավորությունն առաջանում է դատավճռի, վճռի կամ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից,

4) Ֆիզիկական անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցը մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով խոտանելու կամ հին նմուշի պետական համարանիշները նորերով չփոխանակված և չչահագործվող փոխադրամիջոցները դրանք հաշվառող (գրանցող) լիազոր մարմնում հաշվառումից ժամանակավորապես հանելու դեպքում փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունը դադարում է այդ փոխադրամիջոցի վերջին տարեկան տեխնիկական գննության տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ից: Ֆիզիկական անձի դիմումի համաձայն՝ փոխադրամիջոցը լիազոր մարմնում վերահաշվառելու դեպքում այդ փոխադրամիջոցի համար դադարած գույքահարկի պարտավորությունները հակադարձվում են և ենթակա են կատարման սույն օրենքով սահմանված կարգով և չափով: Սույն մասով սահմանված արտոնությունների տրամադրման հետևանքով համայնքների եկամուտների նվազեցումը պետության կողմից փոխհատուցման ենթակա չէ:

3. Հարկվող օբյեկտ համարվող գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառված որևէ արգելանքի առկայությունը հիմք չի համարվում փոխադրամիջոցների գույքահարկը չհաշվարկելու համար:

Հոդված 8. Գույքահարկի հաշվարկման կարգը

1. Կազմակերպությունների համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը:

2. Ֆիզիկական անձանց համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին:

3. Հիմք ընդունելով փոխադրամիջոցների գծով հաշվառում (գրանցում) իրականացնող համապատասխան լիազոր մարմինների կողմից փոխադրամիջոցների վերաբերյալ ներկայացված տեղեկությունները՝ հաշվառող մարմինները հաշվարկում են գույքահարկ վճարողների փոխադրամիջոցների ընթացիկ տարվա գույքահարկի գումարները և վերջիններիս վերաբերյալ գույքահարկ վճարողներին ներկայացնում են գույքահարկի վճարման ծանուցագրեր (այդ թվում՝ ուղարկում են փոստով կամ հանձնում են առձեռն) մինչև տվյալ կիսամյակին հաջորդող ամսվա 1-ը:

4. Գույքահարկի հաշվարկի հետ չհամաձայնելու դեպքում գույքահարկ վճարողները գույքահարկի հաշվարկի ճշգրտման նպատակով կարող են դիմել հաշվառող և գույքահարկի հաշվարկման համար տեղեկություններ տրամադրող լիազոր մարմիններ: Լիազոր մարմինները նշված տեղեկությունները տրամադրում են դիմումները ստանալուց հետո 10-օրյա ժամկետում:

Հոդված 9. Ընդհանուր սեփականության փոխադրամիջոցի գույքահարկի հաշվարկման կարգը

1. Ընդհանուր սեփականության դեպքում փոխադրամիջոցի գույքահարկը հաշվարկվում է դրա ամբողջ հարկման բազայից՝ հաշվառող մարմնի կողմից:

2. Հաշվառող մարմինները, հիմք ընդունելով լիազոր մարմնից սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով ստացված տեղեկությունները, համասեփականատեր հարկ վճարողների գույքահարկը հաշվարկում են՝

1) ընդհանուր համատեղ սեփականության դեպքում՝ ամբողջ փոխադրամիջոցի մասով գույքահարկի գծով սույն օրենքով սահմանված բոլոր հարկային պարտավորությունները՝ համասեփականատերերից որևէ մեկի համար,

2) ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ ամբողջ փոխադրամիջոցի մասով գույքահարկի գծով սույն օրենքով սահմանված բոլոր հարկային պարտավորությունները՝ համասեփականատերերից յուրաքանչյուրի համար՝ իր բաժնի չափով,

3) եթե ընդհանուր համատեղ սեփականության դեպքում անշարժ գույքի հարկ վճարող համասեփականատերերից մեկը կազմակերպություն է, ապա անկախ սույն մասի 1-ին կետից՝ կազմակերպության համար:

Հոդված 10. Գույքահարկի վճարման կարգը և ժամկետները

1. Կազմակերպությունները գույքահարկի գումարները իրենց պետական գրանցման վայրի համայնքի բյուջե են վճարում յուրաքանչյուր կիսամյակ, հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ առկա հարկվող օբյեկտի համար օրենքով սահմանված կարգով հաշվարկված հարկի տարեկան գումարի մեկ երկրորդի չափով՝ մինչև տվյալ կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ հաշվի առնելով սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ճշգրտումների հիման վրա կատարված վերահաշվարկները:

Սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված կարգով գույքահարկի վճարման պարտավորության առաջացման կամ պարտավորության դադարման դեպքերում, սույն մասին համապատասխան որոշված՝ գույքահարկի կիսամյակային գումարները ճշգրտվում են տվյալ կիսամյակում գույքահարկի պարտավորությունների առաջացման կամ գույքահարկի պարտավորությունների դադարման ամիսներին համամասնորեն:

2. Ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարը վճարում են իրենց հաշվառման (գրանցման) վայրի համայնքի բյուջե: Նշված հաշվառման (գրանցման) վայրի բացակայության դեպքում գույքահարկի գումարը վճարում են իրենց հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա գույքահարկի գումարը վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

3. Ֆիզիկական անձանց համար գույքահարկի վճարման ժամկետը հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ն է:

4. Ֆիզիկական անձինք տարեկան տեխնիկական գննության ենթակա փոխադրամիջոցների համար գույքահարկի գծով հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարում են մինչև փոխադրամիջոցների՝ տվյալ տարվա տեխնիկական գննության ներկայացնելը:

Տեխնիկական գննություն իրականացնող սուբյեկտը տեխնիկական գննությունն իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրված՝ տվյալ փոխադրամիջոցի գծով հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանքի հիման վրա, որում նշվում է նաև տեղեկանքը տրամադրելու տարվա այն ժամանակահատվածը, որի համար տվյալ փոխադրամիջոցի մասով կատարված են գույքահարկի վճարումներ:

5. Փոխադրամիջոցի օտարման դեպքում գույքահարկ վճարողները մինչև սեփականության իրավունքի փոխանցման պետական գրանցման օրը ներառող ժամանակահատվածի համար գույքահարկով հարկման օբյեկտ հանդիսացող տվյալ փոխադրամիջոցի մասով գույքահարկի վճարման պարտավորություններն ամբողջությամբ կատարում են մինչև օտարման պայմանագրից ծագող սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Սեփականության իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմինները փոխադրամիջոցի պետական գրանցումն իրականացնում են հաշվառող մարմնի կողմից տրված՝ փոխադրամիջոցի գծով հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանքի հիման վրա, որում նշվում է նաև տեղեկանքը տրամադրելու տարվա այն ժամանակահատվածը, որի համար տվյալ փոխադրամիջոցի մասով կատարված են գույքահարկի վճարումներ:

6. Ֆիզիկական անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցը մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով խոտանելու կամ հին նմուշի պետական համարանիշները նորերով չփոխանակված և չչահագործվող փոխադրամիջոցները դրանք հաշվառող (գրանցող) լիազոր մարմնում հաշվառումից ժամանակավորապես հանելու դեպքում փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորության դադարեցման (հաշվառող մարմնի կողմից գույքահարկի պարտավորութ-

յունների վերահաշվարկման) համար հիմք են հանդիսանում փոխադրամիջոցների հաշվառում վարող լիազոր մարմնի կողմից սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացված տեղեկությունները կամ գույքահարկ վճարողին տրված՝ խոտանումը կամ հաշվառումից ժամանակավորապես հանելը հիմնավորող փաստաթուղթը (որում պարտադիր նշվում է տվյալ փոխադրամիջոցի վերջին տարեկան տեխնիկական գննության տարեթիվը): Ֆիզիկական անձի դիմումի համաձայն՝ փոխադրամիջոցները լիազոր մարմնում վերահաշվառվում են գույքահարկ վճարողին տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրված՝ տվյալ փոխադրամիջոցի գծով գույքահարկի պարտավորություններ չունենալու տեղեկանքի հիման վրա:

Հոդված 11. Տեղեկությունների տրամադրումը և գույքահարկի հավաքագրումը

1. Պետական գրանցում (հաշվառում) իրականացնող լիազոր մարմինները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով գույքահարկով հարկվող օբյեկտի վերաբերյալ տեղեկությունները ներկայացնում են հաշվառող մարմին:

2. Գույքահարկ վճարողները գույքահարկի հաշվարկման նպատակով կարող են անհրաժեշտ տեղեկություններ ստանալ սույն հոդվածի 1-ին մասում նշված լիազոր մարմիններից:

3. Համայնքի ղեկավարներն իրականացնում են գույքահարկի հաշվառումը, վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Գ Լ ՈՒ Մ IV

ՓՈԽԱԳՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 12. Գույքահարկի գծով արտոնությունները

1. Գույքահարկից ազատվում են՝

1) սոցիալական ապահովության մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամները՝ այդ ավտոմեքենաների մասով,

2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված, մահացած, ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց (կամ ընտանիքի անդամներին) սեփականության իրավունքով պատկանող փոխադրամիջոցը՝ մինչև այդ անձանց զավակներից մեկի 18 տարին լրանալը:

2. Ծառայության ընթացքում գույքահարկից ազատվում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով դաշնակից երկրների զինված ուժերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող անձիք:

Պարտադիր ժամկետային ծառայության ժամկետի ավարտից հետո գույքահարկից ազատվում են նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում ծառայություն անցած՝ ռազմաուսումնական հաստատություններն ավարտած անձինք մեկ փոխադրամիջոցի մասով, որի հարկման բազան չի գերազանցում 150 ձիաուժը (չգերազանցող մասով):

Սույն մասով նշված սեփականության իրավունքով հարկ վճարողին մեկից ավելի փոխադրամիջոց պատկանելու դեպքում, արտոնությունները կիրառվում են հարկ վճարողի դիմումի մեջ նշված փոխադրամիջոցի մասով, իսկ արտոնությունների կիրառման համար հիմք է ընդունվում ոստիկանության լիազոր մարմնի կողմից տրված տեղեկանքը անձին սեփականության իրավունքով պատկանող փոխադրամիջոցի թվաքանակի վերաբերյալ և (կամ) փոխադրամիջոցի գրանցման վայրի հաշվառող մարմնի կողմից տրամադրված տեղեկանքը՝ այլ փոխադրամիջոցների մասով արտոնություններ կիրառված չլինելու վերաբերյալ:

Սույն մասով սահմանված արտոնությունները չեն կիրառվում, եթե հարկվող օբյեկտը ծառայության ընթացքում կամ ծառայության ավարտից հետո հանձնվել է վարձակալության կամ հավատարմագրային կառավարման, ինչպես նաև այն դեպքում, երբ հարկվող օբյեկտը ձեռք է բերվել ծառայության ժամկետի ավարտից հետո:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված հարկային արտոնությունների տրամադրման հետևանքով համայնքների եկամուտների նվազեցումը պետության կողմից փոխհատուցման ենթակա չէ:

4. Համայնքի ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ կարող է սահմանել գույքահարկի գծով արտոնություններ և դրանց մասով կայացնել գույքահարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից վճարում կատարելու որոշումներ:

Սույն մասին համապատասխան համայնքի ավագանու սահմանած արտոնության գումարը չի կարող գերազանցել տվյալ տարվա համար գույքահարկի գծով համայնքի բյուջեի հաստատված եկամուտների տասը տոկոսը:

Համայնքի ավագանու կողմից գույքահարկի գծով սահմանված արտոնությունների գումարի դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքի բյուջեին լրացուցիչ դոտացիաներ չեն տրամադրվում:

5. Օրենքով կարող են սահմանվել գույքահարկի գծով այլ արտոնություններ:

Հոդված 13. Հաշվետու տարվա ընթացքում գույքահարկի արտոնության առաջանալը կամ դադարելը

1. Հաշվետու տարվա ընթացքում արտոնություն ունեցող գույքահարկ վճարողը գույքահարկը վճարելուց ազատվում է այն ամսվա 1-ից, երբ առաջացել է արտոնության իրավունքը:

2. Հաշվետու տարվա ընթացքում գույքահարկի արտոնությունը դադարելու դեպքում հարկը հաշվարկվում է արտոնության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

ԳԼՈՒԽ V

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՆՑՈՒՄԸ ԵՎ (ԿԱՄ) ՎԵՐԱԴԱՐՁԸ

Հոդված 14. Գույքահարկի պարտավորություններից ավել վճարված գումարների (գերավճարների) հաշվանցման և (կամ) վերադարձման կարգը

Սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված գույքահարկի մասով հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարները (գերավճարները) հաշվառող մարմնի կողմից հաշվանցվում են հարկ վճարողի՝ սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ գույքահարկի այլ պարտավորությունների, «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1994 թվականի փետրվարի 14-ի Հ.Ն.-1005-1 օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ հողի հարկի պարտավորությունների, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության

2002 թվականի դեկտեմբերի 30-ի ՀՕ-491-Ն օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ գույքահարկի պարտավորությունների կամ «Անշարժ գույքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ անշարժ գույքի հարկի պարտավորությունների հաշվին կամ վերադարձվում են ոչ ուշ, քան վերադարձման մասին հարկ վճարողի դիմումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:

Սույն հոդվածի առաջին մասում նշված հաշվանցումները և (կամ) վերադարձերը, ինչպես նաև «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 30-ի ՀՕ-491-Ն օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ գույքահարկի գծով ապառքների հաշվառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ VI

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 15. Սույն օրենքը խախտելու համար պատասխանատվությունը

1. Սույն օրենքի դրույթները խախտելու համար հարկ վճարողները պատասխանատվություն են կրում իրենց գույքով:

2. Գույքահարկի հաշվարկման համար ոչ ճիշտ տեղեկություններ տրամադրած լիազոր, տեղական ինքնակառավարման մարմիններն ու դրանց պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3. Փոխադրամիջոցների գույքահարկի գումարի վճարումը սահմանված ժամկետից մեկ տարուց ավելի ուշացնելու դեպքում համայնքի ղեկավարը կարող է դիմել դատարան՝ հարկ վճարողի հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով հարկ վճարողի գույքի վրա բռնագանձում տարածելու համար, բացառությամբ օրենքով սահմանված այն գույքի, որի վրա բռնագանձում տարածվել չի կարող: Ընդ որում, հարկ վճարողի ժամկետանց հարկային պարտավորությունների ընդհանուր գումարը 500 հազար դրամը գերազանցելու դեպքում, համայնքի ղեկավարի կողմից հարկ վճարողի գույքի բռնագանձման նպատակով դատարան հայցադիմումի ներկայացումը պարտադիր է:

4. Սույն հոդվածով սահմանված գույքահարկի վճարման գծով խախտումներ հայտնաբերվելու դեպքում գույքահարկի գծով հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը կատարելուց հետո անցել է տասը տարի:

Հոդված 16. Օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերը

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասությունների սահմաններում սույն օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության հետ:

Գ Լ ՈՒ Խ VII

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 17. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից և տարածվում է 2015 թվականի հունվարի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա:

2. Կազմակերպությունները 2015 թվականի համար վճարման ենթակա կիսամյակային գումարները հաշվարկում են սույն օրենքի 10-րդ հոդվածով փոխադրամիջոցների գույքահարկի վճարման համար սահմանված կարգով՝ հիմք ընդունելով նախորդ տարվա վերջին կիսամյակի գույքահարկի հաշվարկային ցուցանիշները:

3. Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկները, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, Հայաստանի Հանրապետության պետական ոչ առևտրային կազմակերպությունները՝ պետական սեփականություն հանդիսացող փոխադրամիջոցների մասով, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինները և հիմնարկները սույն օրենքով սահմանված կարգով

փոխադրամիջոցների գույքահարկ են հաշվարկում և վճարում սկսած 2017 թվականի հունվարի 1-ից՝ այդ տարվա և հետագա տարիների համար:

4. 2014 թվականի ընթացքում կամ մինչ այդ առաջացած կամ դրանից հետո նույն ժամանակաշրջաններին վերաբերող գույքահարկի գծով պարտավորությունները 2015 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում, և դրանք ենթակա են կատարման «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հոդված 18. Հարկ վճարողներին հաշվառող մարմինները

Սույն օրենքի իմաստով փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներին հաշվառող մարմիններ են հանդիսանում համայնքները, որոնք հարկ վճարողների և փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հիմնավորում

«Փոխադրամիջոցների գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը). «Փոխադրամիջոցների գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 27-ի թիվ 25-11 արձանագրային որոշմամբ հաստատված՝ «Գույքահարկի հարկման համակարգի արդյունավետության բարձրացման ուղիները» հայեցակարգից:

2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Ներկայումս սեփականության իրավունքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող փոխադրամիջոցների համար գույքահարկը վճարվում է «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան: Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի հարկման համակարգի բարեփոխումների համատեքստում նախատեսվում է հողամասերը և դրանց վրա կառուցված շենքերը և շինություններն ընդունել որպես միասնական հարկման օբյեկտ և դրանց համար սահմանել միասնական հարկ: Արդյունքում անհրաժեշտություն է առաջանում ուժը կորցրած ճանաչել «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքը, որով կարգավորվում են նաև փոխադրամիջոցների գույքահարկով հարկման հարաբերությունները:

3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Փոխադրամիջոցների գույքահարկով հարաբերությունների կարգավորման նպատակով «Փոխադրամիջոցների մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվող դրույթները համապատասխանեցնել «Գույքահարկի մասին» ՀՀ գործող օրենքի դրույթներին:

4. Կարգավորման առարկան. Նախագիծը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները:

5. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը. Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է «Փոխադրամիջոցների մասին» ՀՀ օրենքի դրույթները համապատասխանեցնել «Գույքահարկի մասին» ՀՀ գործող օրենքի և «Անշարժ գույքի հարկի մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվող դրույթներին: